

ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Սույն թվականի սեպտեմբերի 10-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությունների դահլիճում տեղի է ունենում ճեմարանի 1983—1984 ուսումնական տարեշրջանի բացման հանդիսությունը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի ատենապետ Տ. Սիոն արքեպ. Մանուկյանը, Մայր տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպ. Սանթուրյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոկապալյանը, ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Հունաստանի հայոց թեմի հայրապետական պատվիրակ և Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը, Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի տեսչությունն ու դասախոսական կազմը, ուսանողությունը, մայրավանքի պաշտոնեությունը և այլ հյուրեր:

Հանդիսությանը ներկա էր նաև Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Հանդիսությունը սկսվում է Հայաստանի պետական հիմնի երաժշտությամբ, որից հետո ներկաները խմբովին արտասանում են «Տերունական աղոթքը»: Այնուհետև հոգևոր ճեմարանի սաները մեծ ոգևորությամբ կատարում են «Ճեմարանի քայլերգը»:

Բացվում են հանդիսությունների դահլիճի դռները, և բուրվառակրի ու մոմակիրների ուղեկցությամբ, Ավետարանը ձեռքին, դեպի նախագահության սեղանն է շարժվում ճեմարանի փոխտեսուչ Տ. Հայկազուն վրդ. Նաջարյանը և ընթերցում «Սերմնացանի առակը» (Մատթ. ԺԳ 4—9) հատվածը:

Ավետարանի ընթերցումից հետո, ճեմարանի հոգևոր երաժշտության դասախոս Հայկ Ֆրունջյանի գլխավորությամբ, ճեմարանի սաները կատարում են «Որք կարդարեցին» և «Աշակերտք Քրիստոսի» շարական-երգերը: Ապա Գ լսարանի ուսանող Մեսրոպ սրկ. Խաչիկյանը արտասանում է Նարեկացու «Աղերս առ Սուրբ Հոգին» (Բան ԼԴ) հատվածը:

Ուսումնական տարվա վերաբացման առթիվ հոգևոր ճեմարանի տեսուչ Տ. Եղնիկ քհն. Պետրոսյանը հանդես է գալիս հետևյալ խոսքով.

«Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևոր ճեմարանը կրկին բացում է իր դռները: Սկսվում է նոր ուսումնական տարին: Այս սրբազան կամարների տակ այսպես սկսվել և ավարտվել են բազմաթիվ ուսումնական տարիներ, որոնց ընթացքում հոգևոր ճեմարանը կատարել է իր հիմնական գործը, այն է. պատրաստել ձեռնհաս և կարգացած հոգևորականներ Հայ Եկեղեցու և հայ ժողովրդի համար:

Այսօր այս դահլիճում նստած հոգևորականների մեծ մասը հոգևոր ճեմարանի շրջանավարտներ են:

Մեր հարգարժան հոգևորականների կողքին այսօր նստած են նաև երիտասարդ, մատաղ հոգիներ, որոնք հոգևոր ճեմարանի այսօրվա ուսանողությունն են: Նրանք մտել են այս կամարների տակ, այս կամարների տակ մնալու, այս կամարների տակ ապրող հայ կրոնական և մշակութային ոգու մասնիկը դառնալու համար:

Հոգևոր ճեմարանը այս ուսումնական տարին սկսում է 47 ուսանողներով՝ բաժանված երեք լսարանների և երկու դասարանների:

Հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը այս տարի համալրվել է երկու նոր ուժերով: Անգլիայի Օքսֆորդի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետում իր բարձրագույն կրթությունը ստանալուց հետո Մայր Աթոռ և հոգևոր ճեմարան վերադարձավ Տ. Հովնան աբեղա Տերտերյանը:

Այս տարի հոգևոր ճեմարանում դասախոսական աշխատանքի է հրավիրվել նաև բանասիրական գիտությունների թեկնածու Լևոն Տեր-Պետրոսյանը:

Հոգևոր ճեմարանի տեսչության կազմը հետևյալն է.

Տեսուչ.—Եպսիկ քահանա Պետրոսյան:

Փոխտեսուչ.—Հայկազուն վարդապետ Նաջարյան:

Վերակացուներ.—Կառլեն սրկ. Պետրոսյան, Վաչագան Հովհաննիսյան և Լևոն Պետրոսյան:

Քարտուղար.—Գարուշ սրկ. Լազարյան:

Գրադարանավար.—Հենրիկ Բալյան:

Նոր՝ 1983—84 ուսումնական տարին ընկալվում է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ծննդյան 75-ամյակի և Սրբալույս Մյուռոնի օրհնության տոնակատարությունների նախօրյակին: Այդ նոր թափ, նոր եռանդ է հաղորդում մեր աշխատանքներին:

Վեհափառ Տեր, հոգևոր ճեմարանի տեսչությունը, դասախոսական կազմը և ուսանողները հավաստիացնում են Ձերդ Սրբությանը, որ այս տարի նույնպես սրբությամբ և պարտաճանաչությամբ հոգևոր ճեմարանը կապրի ուսումնական-դաստիարակչական կյանքով:

Այս առթիվ խնդրում ենք Ձերդ Սրբության օրհնությունը հոգևոր ճեմարանին:

Օրհնեցեք մեզ, Վեհափառ Տեր»:

Այնուհետև իր օրհնությամբ և բարի մաղթանքներով խոսում է Վեհափառ Հայրապետը:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Աստուծո ողորմությամբ մի անգամ ևս Մայր Աթոռիս հոգևոր ճեմարանը իր դռները բաց է անում, և այսպիսով սկսվում է նոր ուսումնական տարեշրջանը՝ 1983—1984:

Ես եռջանիկ եմ, անշուշտ, որ այս անգամ ևս ներկա եմ գտնվում այստեղ, ներկա եմ գտնվում այս կարճ, բայց հուլիչ արարողության, հանդիպում եմ կրկին ձեզ բոլորիդ՝ հատկապես մեր հարգելի դասախոսներին և մեր սիրելի սաներին, որոնք այս տարի ավելի մեծ թվով են ներկայանում, որը, անշուշտ, առավել ոգևորություն է պատճառում մեզ:

Վստահ եմ, թե ինչպես նախորդ տարիներին, այս տարի ևս և՛ տեսչությունը, և՛ դասախոսական կազմը, և՛ մյուս պաշտոնյաները նոր թափով, նոր ոգևորությամբ պիտի վերսկսեն իրենց աշխատանքները, իսկ դուք, սիրելի սաներ, վստահ եմ, որ նույն լուրջ գիտակցությամբ պիտի տանեք ձեր աշխատանքները և տարվա ընթացքում ջանասեր պիտի լինեք, չպիտի տկարանաք, ծուլանաք ձեր ուսումնական գործունեության ընթացքում, պիտի աշխատեք հնարավոր չափով առավել գիտելիքներ ընդունել և ամբարել այն բոլոր բնագավառներից, որոնք դասավանդվում են ձեզ: Մասնավոր կփափագիմ ես, որ մասնավոր ուշադրություն դարձնեք նաև եկեղեցական արարողություններին, ժամերգություններին կանոնավոր հաճախեք, և ոչ միայն պարզապես ներկա լինեք եկեղեցական արարողությանը, այլ գործնապես մասնակցեք և այս ձևով ձեռք բերեք ունակություն, վարժություն և գիտություն նաև այդ կարևոր ասպարեզում, որովհետև հոգևորականից, գուցե առաջին հերթին, պահանջվում է լավ ծիսակատար լինել և տեղյակ եկեղեցական արարողություններին: Այս բոլորի վրա պետք է ավելացնեմ նաև, ինչպես նախորդ տարիներին ես չէի մոռանում ընդգծել, որ մեր ուշադրությունը, բոլորիս ուշադրությունը՝ ինձանից սկսյալ, հոգևոր ճեմարանի տեսչությունից, դասախոսներից և մեր Մայր Աթոռի միաբաններից սկսյալ, բոլորիս ուշադրությունը ձեր վրա պիտի կենտրոնանա նաև, ձեր կարգապահ կյանքի առնչությամբ, ձեր կեցվածքի, ձեր խոսվածքի, պարկեշտության և վայելչության տեսակետից: Մի խոսքով այն, ինչ մենք հասկանում ենք բարոյական կարգապահություն

ասելով: Այդ հարցերի մասին մենք միշտ պահանջկոտ պետք է լինենք և պետք է սպասենք ձեզանից՝ սիրելի սաներ, որ դուք, իսկապես, կարգապահ լինեք ձեր մտածումներում, ձեր զգացումների մեջ, ձեր վարք ու բայքի մեջ: Սա շատ կարևոր հանգամանք է, առանց դրանց մեր հոգևոր ճեմարանում չենք կարող պահել ուսանողներ: Եվ անցյալում էլ, անշուշտ, պատահել են, որ երբ մենք բազում ազդարարություններից կամ հորդորներից հետո, երբ տեսել ենք, որ այս կամ այն ուսանողը այդ բարոյական նկարագիրը չի կարողանում պահպանել, մենք նրանց հրավիրում ենք դուրս գալ ճեմարանից: Այս, ես կրկնում եմ կարևորությամբ, և վստահ եղեք, որ մեր ուշադրությունից երբեք չպիտի վրիպի այս պարագան:

Ես, մասնավոր կերպով, ուզում եմ ողջունել այստեղ դասախոսական կազմը, մանավանդ, ուրախությամբ լսեցի տեսչի զեկուցումից, որ դասախոսական կազմի մեջ ավելացան նաև նոր դասախոսներ, և վստահ եմ, որ նրանք նախկինների հետ միասին՝ ձեռք-ձեռքի տված իրենց պարտականությունները լիակատար կերպով պետք է կատարեն:

Մեր հոգևոր ճեմարանը իմ գնահատականով, կարելի է ասել, որ քայլ առ քայլ հառաջադիմում է, տակավին, գուցե, չի հասած այն բարձունքին, որին մենք տենչում ենք: Դա դժվար գործ է, երկարատև աշխատանքի ու փորձի և դասախոսական կազմի հետ կապված: Եվ այդ բոլորը, սակայն, ինչպես ասացի, հետզհետե իրագործվում է, և ես վստահ եմ, որ այս ճանապարհով առաջիկա տարիների ընթացքին մենք իրոք պիտի կարողանանք ավելի և ավելի բարձր մակարդակի վրա դնել մեր հոգևոր ճեմարանն ուսումնական և բարոյական, ինչպես նաև հոգևոր դաստիարակչական տեսակետից: Բարեբախտաբար, մենք բոլոր տվյալները ունենք, մեր նյութական պայմանները բավական ձեռնտու են, որպեսզի որևէ խնայողություն չկատարենք այդ տեսակետից: Եվ նաև երջանիկ ենք, որ մեր երկրում բարենպաստ պայմանների մեջ ենք գործում թե՛ իբրև Եկեղեցի և թե՛ իբրև կրոնական տարբեր հաստատություններ: Այստեղ ներկա է մեր պետական իշխանության ներկայացուցիչը, և այս առիթով, ես ուզում եմ իմ երախտագիտությունը հայտնել մեր հայրենանվեր պետությանը, որ միշտ իր բարի վերաբերմունքով նպաստում է Մայր Աթոռի աշխատանքների հառաջդիմության ու նաև մեր հոգևոր ճեմարանի բարգավաճման:

Ահա, այս պայմանների մեջ սկսում ենք մեր նոր տարեշրջանը և ես հայցում եմ բոլորիդ համար Աստուծո օրհնությունը, օգնականությունը և մաղթում եմ ձեզ լիակատար, նորանոր հաջողություններ:

Սիրելի դասախոսներ, և դուք սիրելի ուսանողներ, օգնեցեք մեզ, հոգևոր ճեմարանին, որպեսզի մեր այս ազնիվ և բարի նպատակները հետզհետե իրագործվեն Աստուծո ողորմությամբ:

Թող Տերը ծաղկյալ պահի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը և հոգևոր ճեմարանը, այժմ և միշտ, ամեն:

*
* *

Հոգևոր ճեմարանի բացման սույն հանդիսությունը ավարտվեց խմբովին երգված «Հայր մեր»-ով և Նորին Սրբության «Պահպանիչ»-ով: